**Տեղեկանք**

**ՀՀ 2018 թվականի զբոսաշրջության զարգացման**

**պետական ծրագրի կատարման վերաբերյալ**

Ճշտված պլան - 200.0 մլն դրամ, ֆինանսավորում – 189.9 մլն դրամ, դրամարկղային ծախս – 189.9 մլն դրամ, 2017 թվականին դրամարկղային ծախսերը կազմել են 84.4 մլն դրամ: 2018թ. ճշտված պլանի և դրամարկղային ծախսի միջև շեղումը կազմել է 10.1 մլն դրամ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացնելու արդյունքում առաջացել են տնտեսումներ: 2018 թվականին 2017 թվականի համեմատությամբ դրամարկղային ծախսերն աճել են 105.5 մլն դրամով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2018 թվականին 2017 թվականի համեմատ էականորեն ավելացել են Զբոսաշրջության ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, ծրագրով նախատեսված միջոցառումների համար նախատեսված գումարները, ինչպես նաև նախատեսվել է 29.2 մլն դրամի չափով ԱԱՀ, որը 2017 թվականին չի եղել:

**Զբոսաշրջության զարգացման ծրագրի** հիմնական նպատակն է նպաստել՝

- Հայաստան զբոսաշրջային այցելությունների շարունակական դինամիկ աճին,
- Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը,
- ազգային եկամտի ավելացմանը,
- բնակչության կենսամակարդակի բարձրացմանը,
- Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի համաշխարհային ճանաչելիության բարձրացմանը,
- Հայաստանի, որպես աշխարհում գրավիչ զբոսաշրջային երկրի նկարագրի ձևավորմանը:

**Ծրագրի նպատակին հասնելու համար պետք է լուծվեն հետևյալ խնդիրները**.

- ամրապնդել և շարունակական բարձրացնել Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը,

- դիվերսիֆիկացնել հայկական զբոսաշրջային արդյունքը, ձևավորել նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքներ,

- դիվերսիֆիկացնել Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի շուկաները,

- համաշխարհային շուկայում ամրապնդել, զարգացնել և խթանել Հայաստանի նկարագիրը՝ որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկիր,

- բարելավել և զարգացնել ենթակառուցվածքները,

- ամրապնդել և շարունակական բարձրացնել ծառայությունների որակը,

- զարգացնել մարդկային ռեսուրսները,

- աջակցել զբոսաշրջության բնագավառում գործող, մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների գործունեությանը,

- ամրապնդել և շարունակական ակտիվացնել միջազգային համագործակցությունը:

Զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ապահովման և համակարգման նպատակով ստեղծվել են միջգերատեսչական և հանրային խորհուրդներ, որոնց գործունեությունն ուղղվել է ոլորտում առկա առաջնային խնդիրների բացահայտմանը, վերհանմանը, քննարկմանը և համատեղ լուծումների առաջարկմանը:

Հայաստանի զբոսաշրջության գրավչությունները ներկայացվել են թվով 5 միջազգային ցուցահանդեսներին, ինչպես նաև Profi.travel առցանց ցուցահանդեսին:

**Կայացել են ավանդական փառատոնները**

ՀՀ Սյունիքի մարզի Քարահունջ համայնքում «Թութ» խորագրով «Սյունյաց ավանդույթներ»,

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում «Պատմամշակութային վերածնունդ»,

ՀՀ Վայոց ձորի Արենի համայնքում «Գինու»,

ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում «Խորոված» խորագրով, և ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքում «Տոլմա» խորագրով ավանդական ուտեստների մրցույթ-փառատոները:

**Քայլարշավային երթուղիների մշակում՝** Մշակվել է մեկ ընդհանուր թվային բազմաֆունկցիոնալ քարտեզ, որը տեղադրվելու է www.armenia.travel կայքում: Մշակվել են

երթուղիների նշագրման ստանդարտները, որոնց հիման վրա ստեղծվել է Brand Book-ը և ներկայացվել բոլոր շահագրգիռ կողմերին:

**Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի կողմից իրականացվել է** միջազգային վերապատրաստման դասընթաց:

Զվարթնոց օդանավակայանի ժամանման սրահում բացվել է զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնը՝ ՀՀ պետական աջակցությամբ Հայաստանի մարզերում արդեն գործում են 5 տեղեկատվական կենտրոններ:

Բոլոր նպատակային շուկաների համար մշակվել և տպագրվել են հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող 44000 հատ գովազդատեղեկատվական տարբեր նյութեր՝ բրոշյուր, քարտեզ, տեղեկատվական թերթիկ, բաներ:

Տպագրվել են նյութեր՝ «Полиглот» ուղեցույց (270 էջ)՝ 10000 օրինակ, «Պոբեդա» ավիաընկերության պաշտոնական ամսագրում՝ երկու ամիս շարունակ հասանելի է եղել ավիաընկերության մոտ 1 մլն. ուղևորներին, Where Minsk ամսագրում՝ տարածվել է 250-ից ավելի քաղաքային վայրերում, Business Dubai ամսագրում՝ տպագրվում է 8000 օրինակով, 20000 ընթերցողների թվաքանակով, Maxposure օդանավային ամսագրում՝ 2 տարբեր ուղղություններով տարածվող հրատարակչություններում՝ 2 հոդված, «Комсомольская правда» օդանավային ամսագրի առցանց հարթակում՝ 2 հոդված, «Коммерсант» ամենօրյա համազգային գործարար թերթում:

Ստեղծվել է HD որակի 159 լուսանկարներից կազմված բազա:

Նպատակային շուկաներում մարքեթինգային և խթանման միջոցառումների շրջանակներում իրականացվել են շնորհանդեսներ.

- «ITB BERLIN 2018» ցուցահանդեսի շրջանակում՝ «Բացահայտիր Հայաստանը» խորագրով, որին մասնակցել են Գերմանիայի զբոսաշրջային գործակալությունների ներկայացուցիչներ, լրագրողներ, ցուցահանդեսին մասնակից արտասահմանյան ընկերություններ, բլոգերներ, Գերմանիայի և Հայաստանի զբոսաշրջային օպերատորներ և գործակալներ, ոլորտի մասնագիտացված լրատվամիջոցներ:

- Ցինդաո քաղաքում տեղի ունեցած Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ երկրների ներմուծվող ապրանքների ցուցահանդեսի շրջանակում: Մշակվել է համագործակցության հուշագիր ՀԶՀ-ի և «Նոր մետաքսի ճանապարհ սինոլոգիական հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի միջև:
- Հայկական պատվիրակությունը մասնակցել է Դուբայ քաղաքում կազմակերպված Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացնող և Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ ու բարենպաստ ուղղության ճանաչելիության բարձրացմանն ուղղված՝ «Հայաստան. ժամանակն է բացահայտելու» խորագրով շնորհանդեսին:
- Machanents tourism & art կենտրոնում նախաձեռնվել է Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները և «Ռուսական հետքը Հայաստանում» զբոսաշրջային արդյունքը ներկայացնող շնորհանդես: Միջոցառմանը ներկա են եղել ավելի քան 10 երկրներից ժամանած 50-ից ավելի մասնակիցներ:

Սմիթսոնիան հաստատության աջակցությամբ կազմակերպված «Ֆոլքլայֆ» ամենամյա փառատոնի շրջանակներում ԱՄՆ 3 քաղաքներում կայացել են հանդիպումներ զբոսաշրջության ոլորտի ավելի քան 70 կազմակերպությունների և ավելի քան 40 մասնագիտացված լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Նկարահանվել է Smithsonian Folklife փառատոնի վերաբերյալ կարճ տեսահոլովակ: Մասնացության արդյունքում ԱՄՆ-ում հիմնվել է Հայաստանի զբոսաշրջային գրասենյակը

**Սփյուռքում մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացման շրջանակներում՝**

Փարիզում հրատարակվող Սփյուռքի «Նոր յառաջ» երկօրյա թերթի առցանց հարթակում տեղադրվել է «Սա Երևանն է, այստեղ դու տանն ես» խորագրով հոդված: «Ժամ» համահայկական կրթամշակութային պարբերականի հետ համագործակցության արդյունքում տպագրվել է մեկ հոդված: «Օրեր» եվրոպական անկախ ամսագրում տպագրվել է առաջին հոդվածը Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ:

Լիբանանյան «Վանա ձայն» ռադիոկայանի եթեր է հեռարձակվել առաջին ռադիոհաղորդաշարը նվիրված Ֆրանկոֆոնիայի 17-րդ Գագաթաժողովին: «Վանա ձայնի»

եթերում Մերձավոր Արևելքի երկրների ունկնդիրների համար հեռարձակվել է «Երազի երկիր» խորագրով հաղորդաշարը (11 հաղորդում):

Ճանաչողական այցով Հայաստան են այցելել 5 երկրներից թվով 50 ԶԼՄ ներկայացուցիչներ և բլոգերներ, մասնավորապես՝ Լիբանանից, Ռուսաստանից, Ֆրանսիայից, Հնդկաստանից և Չինաստանից: Այցերի արդյունքում՝ գրանցվել է 3 մլն-ից ավելի դիտում, 15-ից ավել տեսանյութ, 100-ից ավել հոդվածների հրապարակումներ՝ արդյունքները շարունակական են:

Շարունակվել է էլեկտրոնային մարքեթինգի ռազմավարության իրագործումը և Armenia.Travel զբոսաշրջային պաշտոնական կայքի կատարելագործումը՝ հայրենական զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է www.armenia.travel կայքի (720 100 դիտումներ (page views), Facebook-ի (Armenia and Travel) հետևորդներ՝ 62,826, հավանողներ՝ 61,664, Instagram-ի (Armenia_and_Travel) հետևորդներ՝ 41 765) միջոցով:

Նկարահանվել են Հայաստանի մասին գովազդային տեսահոլովակներ, որոնք հրապարակման առաջին 24 ժամվա ընթացքում ապահովել է մոտ 300 հազար գրառման հասանելիություն, մոտ 100 հազար դիտում և մոտ 10 հազար արձագանք (reactions, comments & shares), վերջիններս թարգմանվել և տարածվել են թիրախային շուկաներում:

**«Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում,** մասնավորապես՝ կրոնական, էթնո, էկո-զբոսաշրջային արդյունքների մշակում, քարտեզագրում, համապատասխան զբոսաշրջային երթուղիների գծագրում, թվայնացում և հրապարակում» միջոցառման շրջանակներում.

● Մշակվել է «Ռուսական հետք Հայաստանում» զբոսաշրջային արդյունքը, որի շնորհանդեսը տեղի է ունեցել Ռուսական պետական թանգարանի Միխայլովյան դղյակում: Տպագրվել են թվով 1000 բուկլետներ, 300 բացիկներ, պատրաստվել և ցուցադրվել է տեսահոլովակ, ինչպես նաև ներկայացվել է մշակութային ծրագիր: Պատրաստվել է տարբերանշանը (լոգո) և պատենտավորվել:

● Մշակվել է «Գինու զբոսաշրջություն» զբոսաշրջային արդյունքի երթուղին, որը անցնում է ՀՀ Վայոց Ձորի, Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերով, ընդգրկելով բոլոր զբոսաշրջային ծառայություններ մատուցող գինու

գործարանները, ներառելով ամբողջ գինեգործության ոլորտը և դրան առնչվող այլ ոլորտները և պատմամշակութային կոթողները, որոնք կազմելու են գինու երթուղու հարակից բաղադրիչը: Մշակվել է «Գինու զբոսաշրջություն» զբոսաշրջային արդյունքը ներկայացնող բրոշյուր և տեսահոլովակ:

**Ֆրանկոֆոնիայի 2018 թվականի գագաթաժողովի կազմակերպման շրջանակներում** Հայաստան ժամանած հյուրերի համար կազմակերպվել են տուրեր Հայաստանի մի շարք զբոսաշրջային գրավչության վայրեր՝ մշակվել է օնլայն հարցաթերթիկ, որը տեղադրվել է Գագաթաժողովի պաշտոնական կայքէջում, և տպագրվել են ակտիվ QR կոդով թռուցիկներ, որոնք բաժանվել են օդանավակայանում, հյուրանոցներում, Գագաթաժողովի ինֆորմացիոն կենտրոններում, Ֆրանկոֆոն ավանում և Մարզահամերգային համալիրում: Տուրերին մասնակցել են մոտ 500 մասնակից: Գագաթաժողովի շրջանակում բացված Ֆրանկոֆոն ավանում ներկայացվել է Հայաստանը՝ բաժանված մարզերի և Արցախը (240քմ տաղավարով): Տաղավարում կազմակերպվել են նաև ավանդական արհեստագործության ցուցադրություններ և դասընթացներ՝ խաչքարագործություն, գորգագործություն, արծաթագործություն, գոտեգործություն, ժանյակագործություն: Կազմակերպվել է բոլոր մարզերի հուշանվեր արտադրողների ցուցահանդես-վաճառք: Գագաթաժողովի հյուրերին տրամադրելու նպատակով թարգմանվել և 3000 օրինակ տպագրվել են Հայաստանի մասին գովազդային փաթեթներ ներառող Հայաստանը ներկայացնոց բրոշյուրներ, քարտեզներ, թռուցիկներ և կտորե պայուսակ:

**Միջազգային համագործակցության շրջանակներում** ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի և Ցզյանսու նահանգի զբոսաշրջության ադմինիստրացիայի միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր: Ուժի մեջ է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը: Ապահովվել է մասնակցությունը Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև)՝ Ժնև Կանտոնի Առևտրաարդյունաբերական պալատում (CCIG) անցկացվող «Հայաստան. բացահայտեք հնարավորությունները» խորագրով գործարար համաժողովին, Հունաստանի Սալոնիկ

քաղաքում կազմակերպված «Մետաքսի ճանապարհի զբոսաշրջություն» թեմայով 8-րդ միջազգային համաժողովին:

Հայաստան այցելած զբոսաշրջիկների քանակը 2018 թվականին կազմել է շուրջ 1.6 մլն մարդ, որը 10.5%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը: